

Տ Ե Ղ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Բ Ա Գ Ա Ր Ա Ն

ԲԱԳԱՐԱՆ կամ **ԲԱԳՐԱՆ**. — Ի ՀնուՄե
անուանի բաղաձ Այրարատայ Արշարունից
գաւառի մէջ, Ախուրեան գետոյն աջափող-
մեան ափունքը՝ և Երուանդաշատի հիւսի-
սային կողմը՝ Հինգ մղոն հեռաւորութեամբ,
Երուանդ Բ շինել տուած է քաղաքս Երուան,
դաշտափ նման, որ և մէջը մեհնանքեր կա-
ռուցանելով, երբ արքունիքը Արմաւրէն փո-
խադրեց յԵրուանդաշատ, հոն գտնուած կու-
բերն ալ հոս բերաւ, և շատ բազիններ ու-
նենալուն համար կոչուեցաւ Բագարան կամ
Քաղաք կուոց։ Երուանդայ Երուանց եղբայրն
քրմապետ դրուած էր քաղաքին մեհնաց,
զոր բռնել տալով Սմբատ՝ հրամայեց գետը
նետակ և անոր տեղ Մոգպաշտէ անունով
մէջը դրին։ Սմբատ Արտաշէսի տարաւ Եր-
ուանդայ գանձերը և Հինգ հարիւր ծառաները,
Քաղաքս որ ի ՀնուՄե անուանի էր իբրեւ
գլուխ Հայոց հեթանոսական պաշտօնատե-
ղեաց և միջին դարու մէջ սուրբ կրօնից
պաշտամամբ, և Բագարատունիներու շինու-
թեամբ և բնակութեամբ, այժմ տուիւր է
աւերակ վիճակի մէջ կը գտնուի։ Հրաքոյնէ
մը և մեծ երկրաշարժէ կործանած էր թուի
Բագարան. հին հեթանոսական ժամանակ-
ներու վերաբերեալ մնացորդ մը դեռ յայտ-
նուած չէ և ոչ նախնի բազիններէն հստոր մը։

Աւտաշէս Բէ օրերէն, որ Բագարանը անշը-
քացոյց՝ հեթանոսական պաշտամունքները
փոխադրելով յԱրտաշատ, մինչև Թուր դար
չի յիշուիր քաղաքիկս պատմութեան մէջ և
իբրև աննշան մնացած կը թուի. վասն զի
Կամսարականներն իրենց աստուծո հաստա-
տեցին Մարմէտի մէջ։ Բայց երբ Աշոտ Մսա-
կեր անոնց գաւառը գնեց, Բագարանի մէջ
դրաւ իւր աթոռը, ուր և իւր բարեբաղդ
թոռը Աշոտ Ա հաստատեց իւր արքունի-
կան ապարանքը, ինչպէս կը պատմէ Յովհ-

կաթողիկոս, որ և շատ կը յաճախէր հոն։
Աշոտ 862 թուին նոյն ապարանքի մէջ ի-
րեն դուստրը հարսնացոյց Արծրունեաց տան
պալապատ Գրիգոր Գեորգիակի։ Բայց իւր
որդին Սմբատ Ա աթոռը Երազգաւորք փո-
խադրեց, անկէջ վերջն ալ հաստատուեցաւ
Անուայ մէջ։ Հ. Ն. Սարգիսեան որ անձամբ
այցեաւ է տեղւոյս կը յիշէ քաղաքին բեր-
զը բարձր քարածայտի վրայ, երեք կողմերը
խորանդունդ, և շորորողը անմատչելի, քաղա-
քին հարաւային կողմէն միայն ունենալով
վերելք մը։ Տարածութիւնը անձուկ և երկայ-
նածէս է, արեւելեան ծայրը ունի աշտարակ
մը, իսկ պարիսպները կիսափուլ են։ Բերդի
արեւելեան ծայրը աշտարակին դիմաց կը
գտնուի առաջին եկեղեցին՝ Ս. Գեորգ, փոքր
և կիսակործան, զոր այժմեան 50 տնուոր
հայ բնակիչը Ժիժ գարու կիսուն նորոգեք են
տախտակամած, շինելով նաև գաւիթ մը։
Եկեղեցւոյն մէջ կայ փոքրիկ մատուռ խո-
րանին աջ կողմը, և մէջը որոցաձեւ շիրիմ,
որոյ տակ ամփոփուած էր համարուի Ս.
Գեորգայ նշխարներէն մասն մը, որուն բազ-
մաթիւ ուխտաւորներ կու գան, մասնաւոր
Վարազայ Խաչի տունին, և բժշկութիւնը ևս կը
լինին։ Երկրորդ եկեղեցին կը գտնուի բերդը
տանող ճանապարհէ կիսուն վրայ և առա-
ջինէն աւելի մեծ է, սակայն հիւսիսային
որմը միայն անկործան մնացած է և ՁԻ
թուական մը. մօտը կան շիրիմներ։ Երրորդ
եկեղեցին փոքր է և Կմբէթաւոր, քարածայ-
տի մը ծայրը։ Աւտաղութիւնը կ'ըմբ, թէ է-
կեղեցիւ շինած է Թագաւորի մը աղջկէր,
իբր թէ, ասոր շինուելէն առաջ՝ մեծահան-
դէս տօնի մը զբ ուշանալով հասնելու ժամ-
երգութեանէ իւր քնախարանի մօտ շինած
է այս եկեղեցիւ։ Չորրորդ եկեղեցին քաղա-
քի աւերակներէն քառորդ մը հեռու է հա-
րաւային կողմը, և ասոր ալ հիւսիսային որ-
մը կանգուն էր կենայ։ Հինգերորդ չորրոր-
դին մօտ է, որուն չորս կողմի հին պարտի-
զաց և այգիներու տեղը այժմ արօտատեղի
գարձած է։ Սա էր Բագարանի մայր եկե-
ղեցին կամ Միանձանց ուխտը. արտաքին ձե-
ւաքն բազմաշէնի զառաթեւ է, և իւրաքան-
չիւր թեւի մօտ երկու կողմերէ կան գար-

ձեար ուրիշ անկիւններ. իսկ ներքուստ չորս թեւերն ալ կիսաբոլոր են. երկայնութիւնն է լայնութիւնն հաւասար, թեւէ թեւ 17 մետր: Ունի չորս ոչ միաստոր սիւներ. փորձածն է գմբէթը և քովը զանոնաձև մատուց. առոր շուրջը կան բազմաթիւ հին խաչքարեր և շիրիմներ: Իննեքորդ դարու կիսուն կամ քիչ վերջը շինուած կը թուի այս եկեղեցին, յորում կան տասն և մէկ տաճանագրութիւնք և ՆՇ (== 956), և ՆՁԳ (== 1034) թուականները, բայց հնագոյնը անվերջաւնելի է: Հիմքերորս եկեղեցին կը կոչուէր Տապանատան Ս. Կարդղիկէ, վասն զի իւր մէջ կը թաղուէին Քաղբառունի իշխանաւորներ: Յովհն Կաթողիկոս յիշելով Աշոտի որդի Շապուհ սպարապետի թաղումը, կը նշանակէ ասանք բարձրասանկակ դիրքը, երբ կըսէ. «Եղին զնա ընդ հարա իւրում ի Լեռնեմ փնտրանացն սր ի քաղաքապետոյն Բազրանոս»: Հոս փնտրողական նաև Մուշեղի է իւր հոր բազմաշարքա խոստովանող թագաւորին՝ Ս. Սմբատայ՝ մարմնները, որոնք դառով սպանուեցան Յուսուփէն՝ Պոնտայ մէջ: Քաղաքին եկեղեցիներէն այս վերջինն կը թուի ձեռնակերտ Աշոտի, Սմբատ Ա թագաւորի Շապուհ եղբորը որդւոյն, որ ըստ պատմչին, «ի սկզբան ասպարազեանական պաշարչատուքանն» խորհուրդ բարեաց զառնամբ արկեալ, շինէ անպա զպննապետառն եկեղեցիին Բազրանոս՝ որ ի վերայ Ախտեան գետով, և զարդարէ քաղաքն երեսերի ղպատուրք և առնէ նաւա կառելա աստուածածային զորքս պատշաճողով, թեամբն»:

Առնանագրութիւններէն կը յայտնուի, որ Բազրանոս Վեր. իմ դարու սկիզբը նախնաւոր է նորոգուելու, և թիմարայ թաղուհոյն Յաբարանաց զորավարներէն, որոնց ժամանակ կը յիշուի (1214 թն). Գրիգոր՝ Պարոն Բազրանայ, այսինքն քաղաքապետ կամ կողմնակալ, և 1224 թն վարդ.՝ ապա զպատույնն աստուծոյ Նիկի ժամանակները Միանանաց ոսթուր կամ Տապանատան վանքը առաջնորդ էր վարդապետ, և անկէ վերջ 1233—5 տարիները Միւսիմար անն Վրովհեստի ոչոս թուականէն վերջ ուրիշ արձանագրութիւն չկան, կը կարծուի թե քիչ տարի վերջ սկսելու է

ամայանալ և անբիւր Բազրանոս, կամ ինչպէս բռնը, և մեծ երկրաշարժ մը և կամ թաթարաց արշաւանքներէ: — Ստորոգ. Հիմն Հայտ. 394—395. Տեղգր. Հայտ. 200—204. Արարատ, 64—69. Եւ այլն:

ԲԱԳԱՒԱՆ

ԲԱԳԱՒԱՆ կամ ԲԱԳՈՒՍԱՆ. — Թէ հեթանոսութեան և թէ քրիստոնէութեան ժամանակ հռչակաւոր աւան Արարատայ Բազրանայ գաւառի մէջ, Եփրատայ ձախ ափին վրայ: Մեր պատմիչներն կոչուած է նաև Դիցանա ըստ Պարթևաց ինչոյի, և Բազնաց աւան: Կառուցուած է նպատ լեռան հիւսիսային շտրոտին վրայ, Հեթանոսութեան ժամանակ երեսերի էր աւանիս մէջ, վերջին Տիգրանայ եղբոր՝ Մաթան բրմապետի գերեզմանը, ուր կար բազիկ և հիւրընկալութեան իշխան. յորում նաւասարդի առաջին օրը մեծ ածն կը կատարուէր: Խորհուրդին Բազրանայն առնելով կը յայտնէ թէ Տիգրան շինել տուաւ այդ բազիկը և իշխանը, որպէս զի գահերէն ըլլոր ձախապարհորդները վայելին և զիշները հիւրընկալուին. իսկ վերջն ալ վաղարշ հաստատեց աշխարհաւումը հանդէս նոր տարուոյն սկիզբը: Ղրխաւոր բազիկն էր հիւրընկալութեան վանատարի շատուծոյն: Արտաշէր Ստանանան, որ կրակաշնչաշատութիւնը նորագոյն և աճեցուց Պարսից մէջ և քանի մը տարի Հայոց իշխեց, բազաւոր կարծեց զինքն որ պատմութեմ մէջ դառաւ նաև կրակի բազիկ, և հրամայեց մշտապէս պահել «զՀուրն Որմեղա կան» որ ի վերայ բազիկն ուր թաղուածն է, խոր. Բ, Լէ. Միշնդեա Ս. Լուսաւորիշ Կե. սարխայէն դառնալով ի Հայոց կը գտնուէր Տարսնի մէջ, Տրդատ իւր զօրքերն առնելով, ինչպէս նաև Աշին տիկինը և Խոսրովիւրիւստ ըլլոր, Կոստան կը հասնէր պատմութեան, և կ'ըստուէր անոր, զարմանալով զքիթէ ամիս մը ժամանակ: Այդ միջոցին յայտնի է թէ նա տեսալալը կու տար Հեթանոսական մեհնարներն և նոր ու սուրբ կրօնից պաշտաման

տեղ ինչ պատրաստելի Ս. Լուսաւորիչ Հնա-
նելով, Հիմունք զրաւ և ոկոսա կառուցանել
եկեղեցի, յորում զետեղեց Ս. Յովհաննէս
և Աթանազիոսեայ նշխարներն մասն ինչ:
Գրեթէ երեսուն օր աղօթիլք և պահօք ան-
ցնել վերջ, աւանիս մօտ, Եփրատայ եզեր-
քը՝ թագաւորն, իշխանազունք, մեծամեծք,
և յողովողեան բազմութիւնը մկրտուեցան ի
Սրբոյն Գրիգորէ և ինչունեցան սուրբ կրօն-
քը: Աւանիս եկեղեցին մեր Հին մատենա-
գրաց Համեմատ կը կոչուէր Տեղի կամ Մա-
տոսն Ս. Գրիգորի, բայց ռովսոյսբար և
աւելի ստեպ և մինչև ցայժմ կը կոչուի Ս.
Յովհաննէս, և աղազիներէն իսլ-քիսէ
(երեք եկեղեցիք), երեք խորանաց համար:



Բագաւամայ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ:

Ս. Սահակ Հայրապետը, գահընկէցութենէն
վերջ հրատարելով վարդաշապատի ամօտէն,
Հոս եկաւ վերջաշնեալ իւր արդիւնաշատ
կեանքը. նակտյն այս տեղէն աշխարհաբնակով,
Բարս քիւղի մէջ հանգեաւ Ս. Գրիգորէն
շինուած աբիշ մատարանց և եկեղեցիներու
պէս անշուշտ փոքր և անգարդ էր նաև արդ
Բագաւամայ եկեղեցին և չի յիշուիր, թէ
Ս. Սահակ և կամ ուրիշ մէկը ընդարձակած
էինի զպլան Յայտնի չէ. թէ Երբ չինուած
է աւանիս. վանքը, Եփրատի շրջապատէն Հե-
թուէ կայսրը Պարսից վրայ գալցած մամուս
նակ, կ'երեւի թէ քաղաքած է հասկանա-
լայցեկած տխրատեղայն, և յետոյ անաբ վե-
թաշինութեան արտարած 634 թուին, ինչ

տեղ կը դուշափոխ թղաշափ մեծատառ ար-
ձանագրութենէն, որ փորագրուած է միա-
տող՝ եկեղեցւոյն հարաւային, արեւելեան և
հիւսիսային որմնց վերի կողմերը արտա-
քուստ: Հարաւարտպեան եղած է Խորայէ
անուամբ մէկը. շինուածոյն վայելչութիւնը
և մեծութիւնն կայսեր արժանաւոր էր. վասն
որ Հայաստանի բոլոր Հին եկեղեցիներէն
մեծագոյն է, և 1260 տարիներէ ի վեր,
շատ փորձանքներու հանդիպելով հանդերձ,
տակաւին կանգուն է: Ափսոս որ այս արժա-
նաւոր շինուածոյս լուսաւոր պատկերին չգըտ-
նելով, ստիպուած եմ Հոս ներկայացնել անոր
ձեռանկար պատկերն (թ. 173), Որմներ
խիստ հաստ են և ամուր, և զմիմեք վեր


բանող սիւներն ցած են և լայն:
Ընդարձակ խորանին երկու կող-
մերը կան մէկ մէկ մատուռ: Երկու
խորաններ ևս ի վերջոյ շինուած
են երկու մատարանց կամ խորա-
նաց փոստիւ: Եկեղեցին բոլոր
շինուած է մեծամեծ սրբատաշ քա-
քերով, և բոլոր մասանց մէջ կը
տեսնուի գեղեցիկ չափակցութիւն,
բայց Հին եկեղեցեաց նման մթին
է, մանաւանդ որ նորոգութեան
միջոց պատուհաններէն ոմանք գո-
ցած են: Եկեղեցւոյս մէջ չկան և
կամ ծանուցուած շին տակաւին
ուրիշ Հին արձանագրութիւնք. և
զածներն ալ յետին դարուց կը

վերաբերին և դեռ մէկէն հրատարակուած
չեն: Հետաքրքրական են արտաքին որմնց
մէջ հիւստած քանի մը Հին բարեր, որոց
վրայ կան պակասաւոր քաղցկարէն կամ Հին
ստորերէն արձանագրութիւններ (թ. 174-
5-6), և կը թուին մեր տառից գիւտէն ա-
տալ զրուած, թերեւ Տրդատայ և Ս. Գրի-
գորի օրերէն մնացած:

Վանացս մէջ վարդապետի տունին քանը-
ւելով ներսէն Գ. կամ յիշուիր, և տեսնելով
որ դասապետները ժամերգութեան ատեն ա-
ւուր պատշաճի ջարականները քիփփանելով
չփոթութիւն կը ձգեն, հրաման առաւ ինչ
մակաւնաւորուած վարդապետի մը, որ շատ
թականներէն քիփփաները դատէ, որանք կոչ

չոսեցան ճամբրեւորք: Ութերորդ զարու վեր-
ջերը Յովաք կաթողիկոսի ժամանակ վանքո-
շատ ֆորացած էր ոսկի եւ արծաթի ոսկանե-
րով: զորս յափշտակելու համար, 778 թուին
Եղիտ օստիկանի Սիփ գործակալը զրպար-
տութեամբ կոտորել տուաւ վանքի միաբան-
ները, որոց թիւը ըստ Յովհն. կաթողիկոսի
ՅՕԷ աւելի էր: Վանացս եկեղեցւոյ նման
պարիսպն իս հաստ եւ վիթիարքի էր, որով
ոմանք պարոցի կը նմանցնեն, յիշատեմ եւ
երկաթապատ դռներով եւ մարտկոցաձեւ բուր-
գերով: Թէպէտ եւ ասոր ջիւղութիւնն չալ հին
լինելու է, սակայն յայտնի է թէ եկեղեցիքն

աւելի ստէպ նորագուած է, շատ անգամներ
տառակ փրդերէ ֆառասելուն համար, մա-
նասանդ աշխարհաւոր Լէոկթիմուքն, որուն
հարուածներէն դարերով ամայի մնացած է
այս սրբազան վայրը: Վերստին սկսեալ է
շինութիւն եւ բնակութիւն ունենալ յիշ-
բու կիսէն վերջ: Այս ժամանակները Քազ-
րեւմդայ կամ Վաղարշակերտի եպիսկոպոս-
սակն ամբողջ հոս փոխադրուեցաւ: Թաղէի
վանաց իսահակ եպիսկոպոսը 1685ին շրջա-
բերական թղթով մը օգնութիւն եւ նպաստ կը
խնդրէ Երրորդ գոմուտէ Նայ վանատական-
ներէ, վանացս եկեղեցին նորոգելու համար,




Հիմ արձանագրութիւն Ս. Յովհաննու որմից վրայ:

որուն վրայ վեց տարի աշխատեալ են եւ չեն
կարողացեր աւարտել: Քիստոսիան տեղ մը
լինելուն համար թէն շատ նուէրներով կը ճա-
խանար եւ կը բարգաւաճէր վանքս, բայց
միանգամայն շրջապատուած լինելով Գրդե-
րէ, շատ անգամներ կը կողոպտուէր: Ան-
ցած դարու մէջ ես ստէպ տխուր դէպքերու
հոնդիստեմեալ իշխան է վանքս, եւ ամբաշէն
լինելուն պատճառաւ, շրջակայ գրեզերու բնա-
կիւններն եւ վտանգի ժամանակ իւր մէջ կ'ա-
պաստանէին: Երեւանի խանը 1824ին Ա-
լաշկերալի վրայ արշաւած ժամանակ, ինք դեր
խաղաց շուշանիցի խաչատուր վարդապետը,
որ օգնականն էր միանցս տուջնորդ Սահակ


եպիսկոպոսին, ոչ միայն մէջը ապաստանող-
ները այլ եւ դերի բռնաւորներն ազատելով.
թէպէտ եւ յետոյ բռնուելով տարի ու կէս Ե-
րեւմդ բանտը մնաց, բայց վերջը ազատե-
ցաւ: 1862 թուին առաջնորդ Յովհաննէս
եպիսկոպոսը վանացս պարիսպներէ ի հիմանց
նորոգեց եւ 1864ին ժառանգաւորաց վարժա-
բան բացաւ: Վերջին Ռուսաց եւ Օսմանեանց
պատերազմաց ժամանակ (1877-8) եւ անոնց
բռնաժայ արջ կողմերէն ձեկնելէն վերջ,
ապաստանող Գրդերէ եւ անկարգ զինուորներէ
ժեմապէս ֆառասեցաւ վանքս, որոյ ադիտալի
անցքերն ժանօթ են ազգայնոց: Իսկ 1808
էն 1829 տարիներու մէջ հանդիպածներն

երկաթորէն գրած է Պօղոս Յ. Մոսթրատեան:
Նոյն 1897ի պատերազմի ժամանակ չվա-
նացա ձեռագիրները կեանքի տակ լնագելով



Քաղաքացի արձանագրութիւն:

ի կորուստ վարտուած են: Այժմ ունի ձեռ-
ագիր և տպագիր ընդ ամէնը 250 կոտր գիրք:
Անցեալ զարու սկիզբը վանացս մէջ ե.



Քաղաքացի արձանագրութիւն:

դա՛ւ ժողով ն կամօղիկու օժանցալ Դանիէլ
Մութանեցիւն, այս ժողովքին ներկայ էին Աղ-
թամարայ կարապետ, կաթողիկոսը, Թաղէի
ժանսոց Գեորգ, արքեպիսկոպոսը և արիւշ 12
նախկոպոսներ զանազան փոքմերէ, և բազ-

մաթիւ վարդապետներ: — Բազմաւնոյն վեր-
ջին ժողովականութիւններն պատճառու վա-
նացա թեմերը նուագեցան: Ամբողջ Զիրաւայ
գաղտի մէջ հազիւ 6 հազ գիւղեր կան խնդն
վիճակի մէջ: Վանացս պարագի արեւմտեան
կողմն է վանքի գիւղը գտնուածն, որ 30 առն
բնակիչ ենի, որք ժեմ մաասմբ ժանրացած են
ժանքի վրայ: Վանացս մեծ արեւելեան կողմը
շինուած է չորս աշէլ շրտոց մը, որ միշտ
կը բանի: Իսկ արեւմտեան կողմը գրեթէ
մզոն մը հետոս քեռան վրայ ձգուած է գե-
ղեցիկ քառաշէն կամուրջ մը որ շինուած կը
համարուի ժէլ պարու առաջին կիսուն, թե-
րեւ աւելի հին, որոյ խարխիններէն մին քայ-
բայուելով, 1867ին նորոգուեցաւ: — Ըստ
ոմանոց հին Բազաւանը լինելու է այժմեան
վանքի դիմաց կարաւանի ճանապարհի վրայ,
Եփրատայ աջ կողմը, ուր տեսնուած են
բազմաթիւ տներակներ, կը նշմարուին նաեւ
մեծ եկեղեցւոյ մը հիմերը, որոնք քննութեան
կը Կորոսիւր Ստարգր, հիմն Հայաս. 406
— 410: Տեղոր. Հայաս. 221—2: Այլաբաւտ,
527—533: Բազմեանոց, 272—283: Եւ այլն:

Է. ՍՈՒՐԻՍԷ ԵՓՐԱՏԵԱՆ



ՈՒՍՈՒՄԸ ԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՍՐՈՒՆԷԻ ՏԻՒՍԱՐԻ

(ՎԻՊԱԳԻՐ)

(Շաբ. տես էջ 466)

ՏԻՒԻՆ Տիւար տաղանդ մըն է որ իբր
վիպագիր մեզի կ'երեւայ խորեւ ստեղծելու
կարող միտք մը, նաշակով և երեւակայու-
թեամբ նաեւ օժտուած, և իբր գրիչ, զգայուն
և խոհուն գրիչ մը որուն բնարած նիւթն ալ
պէտք եղածին պէս ճոխ է, և որ իր հրեք
վէպերուն ալ նիւթ կը մտասկարարէ, այն